


Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Ի



Ա Ջ Գ Ե Յ Ի Ն Գ Ր Ե Կ Ա Ն Ե Ի Ք Ե Ղ Ե Ք Ե Կ Ա Ն Ե Ս Բ Ե Թ Ե Թ Ե Ր Թ

Հրատարակում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է ԹԷՆԻՍԻ 12 դրն. վեցամսեան 6 դ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 դ. վեցամսեան 8 դ. Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկրները 8 ֆումնք. վեցամսեան 5 ֆումնք: Հասցէ՝ Teheran Rédaction ASTGH-AREVELIAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ» խմբագրութիւնը բաց է ամեն օր ընդէն կիսակի եւ ամեն օրերն:
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով. իւրաքանչիւր ըստին 1 շահի:

Ո. Ընկերութեան գործադիր Մասնաժողովը կը ծանուցանէ, թէ առաջիկայ Կիրակէ Ապրիլ 21-ին պիտի կատարէ Բարեկիշատակ Միքայէլ Մարգարեանի մահուան 3-րորդ տարեդարձի հոգեհանգիստը Ս. Գեորգ եկեղեցիում առաւօտ ժամը Տասին:

ՅԵՐՈՍՈՒԹԻՒՆ

ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ Ե ՀԱՐԿԱԼՈՐ

Հերոսութիւն է հարկաւոր. հայկական հարց. ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խաւարածիտ գուռներ. նամակներ խեղճագործութեան. նամակ Ուրմիայից. ներքին լուրեր. ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ. Գրամական արժէք. Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Ծխախոտի գործածութիւնը:

Նա՛ որին ծանօթ է կործանած մի շէնք օտքի կանգնացելու. դժուարութիւնները, անշուշտ փորձով համոզած է, թէ ա՛րքան ջանք եւ աշխատութիւն, որքան անհատներ ջանքով ծնունդ տուան զհարկաւոր. Դա դեռ մի շէնք է, որի գոյութեանը հազիւ կարելի լինի կէս դար միայն երաշխաւորել, իսկ ինչ տակ այն դէպքում, երբ պէտք

լինի կանգնացնել այն կործանած հսկայ շէնքը, որ կոչուած է ազգ կամ ազգութիւն, որի կեանքի օղակները հիւսւած են հազարաւոր տարիներէ, որ իր ետեւ թողել է դարերի մի հոսանք եւ իւր քայլերը դեռ պիտի դրոշմեն այն անվախճան շաւղի վրայ, որ կոչուած է յաւիտենականութիւն:

Այդ դէպքում ի հարկէ հարկաւոր են գերբնական ճիգեր, այդ դէպքում մարդիկ չեն բաւականանում լոկ նիւթական զոհաբերութեամբ, այլ տալիս են մինչեւ անգամ իրենց վերջին հարստութիւնը... իրենց քաղցր կեանքը:

Հայ ազգը այսօր գտնուած է այդ բարոյական պահանջների առաջ, նա կոչուած է վերականգնելու իւր քայքայուած ազգային շէնքը եւ բնականաբար տալու այն զոհերը, որոնց վրայ պիտի կանգնեն այդ հսկայ շէնքի կամարները:

Ուրեմն որքան անտեղի են այն արտուճները որ երբեմն լուսւած են յուսահատների բերաններէ, թէ աշ-

խարհում այլ եւս հայ չը մնայ, էլ ուժ համար աշխատել, էլ ուժ համար են մեր ջանքերը եւ այլն եւ այլն. այդ բացականչութիւնները ցոյց են տալիս յուսահատութիւն ուրեմն եւ կատարելապէս հեռացնում են մեզ գոյութեան կռիւ գաղափարէ:

Գոյութեան կռիւը պահանջում է հերոսութիւն, մինչեւ կեանքի վերջին րոպէն պէտք է կուեն գմբաւթութիւնների դէմ, չը պէտք է վհատել զհոգեւորութեան քանակութեան առաջ, այլ շարունակ պէտք է յառջանալ գէտի նպատակը, արհամարհելով թէ արհեստական եւ թէ բնական խոչընդոտները եւ վստահ լինել, որ կանցնի առ ժամանակեայ փոթորիկը, կը չքանան մութ ամպերը եւ խոնջացած մարտիկը կը վայելէ վերջապէս իւր քրտնաթոր աշխատանքի պտուղը:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակութիւն № 10-ից

Պէտք է շատ անգամներ զգացած լինիք այն յատուկ հոտը որ բուրում է ծխողների թէ քերանից եւ թէ հագուստից, այս հոտը նորա պարսկն այն թունաւոր տարրին. որ առաջ յիշեցինք, նոյնն է նաեւ որ արտադրում է այն դառն նիւթը, որ տալիս է հին ծխախողին մի գզելի եւ հիւանդացող համ եւ հոտ. ծխախոտի երկուքից մինչեւ երկու հարիւրերորդը քաղկանում է թունաւոր տարրից: Բնականական ազդեցութիւնը: Ծխախոտի թոյնը երկուսն է գալիս թէ ծածկելու եւ թէ ծխելու ժամանակ. առաջին, ան-

գամ երբ մուտք է գործում մեր կազմաճիւղի մէջ, արեան շրջանի միջոցով ազդու կերպով ներգործում է մարմնին, ստատիքը խառնում է, որ աշխատում է իւր պարունակութիւնը մի տեսակով պարպել, որից առաջ է գալիս փսխել եւ ցանկութիւն: Ուղեղի ընթացում, որին յաջորդում է եւ գլխուցաւ. շարժական ջիւղերը (անդազնութեան մէջ ջիւղերը երկու դասի են բաժանուած շարժական եւ զգայուն) գրգռելով յառաջէ, գալիս գլխուցաւ. սկզբում՝ ընտրութիւնը ընդունում է այս անբնական սովորութեան դէմ, սակայն երբ անցնում են մի քանի օրեր կաւ ամիսներ, նա ակամայ անձնատուր է լինում, որով ծխելն այլ եւս չէ պատճառում այն փոփոխութիւնները, որ բացաւրեցինք վերը. այստեղ անհայնի անկարելի է այս

գորտը նիւթերը շարունակ ներշնչել յոյց յետոյ ջանալ մարմնը միանգամայն ազատ պահել նորանց վատ հետեւանքներից:

Երբ մեծ արտաքսիչ գործարանները... թողնուր, մորթը, եւ երկրպագութիւն նորանց արդեանց մեծ մասը արտաքսում են այստեղ անհայնի կրկին մեծ քանակութեամբ մտնում է կազմաճիւղի մէջ: Երբ թոյնի ներկայութիւնը յարատեւ է մանաւանդ երբ ծխել կամ ծախել շտիպանց է բնականաբար պիտի պատճառէ մի երկարատեւ շփոթութիւն՝ մարմնի գործարանների մէջ, 1) Արեան մէջ մացնում է մի թունութիւն, որից առաջ է գալիս մարմնի թոյնութիւն. 2) Ստատիքում առաջացնում է տկարութիւն խառնում եւ ի վերջոյ փսխում. 3) Բերանի եւ կոկորդի նորը թաղանթը կարմ-

րում է եւ չորանում՝ որով յաճախ այդ թաղանթը կտոր կտոր պոկ է գալիս թողնելով թոյնին տակի յայն ասպարէզ իւր թունաւոր արշաւանքն անելու, շատ անգամ պատճառում է քաղցաւ որ կոչում է (ոմշկական լեզուով) ծխողաց քաղցաւ: Ծխախոտի երկար ժամանակ շրթանց վերայ պահելն էլ ազատ չէ նեղիչ վիտանից. արտակարգ մային անոմներ է արտադրում շրթանց վերայ. 4) Թոյնը ցնցողային մասում, թէ որ գրգռում կայ, սաստկացնում է եւ անբարոյանում հազը 5) Սիրտը տկարանում է որին հետեւում է անկանոն գործունէութիւն, սրտի անկանոնութիւնը կարող է մարմնի անկանոն պատճառ դառնալ 6) Զգայարանաց գործարաններում. նախ աչաց պիտը ընդլայնում է, տեսողութիւնը շփոթում է, այնպէս որ

